ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի օգոստոսի 29-ին ժամը 11:00-ին, Թալինի համայնքապետարանում (հասցեն Ք.Թալին,Գայի 1, 3-րդ հարկ) անցկացնել գույքի աճուրդ-վաճառք:

-Աճուրդի առարկա է հանդիսանում՝

Լոտ 1. Թալին համայնքի, Կաքավաձոր բնակավայրի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգը՝ (1500 գծմ երկարությամբ, 522 մմ տրամագծով, 6 մմ պատի հաստությամբ երկաթյա խողովակաշարը, 1 գծմ-ի մեկնարկային գինը 29.908 ՀՀ դրամ) 43,360,000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Աճուրդի նախավճարի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 50%-ի չափով՝ 21,680,000 ՀՀ դրամ, իսկ աճուրդային քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 2,168,000 ՀՀ դրամ: Աճուրդի նախավճարը պետք է վճարվի աճուրդի անցկացման օրը՝ աճուրդը սկսելուց առնվազն 30 րոպե առաջ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության վճարի անդորագիր (որի չափը սահմանված է 5000 ՀՀ դրամ) և անձնագիր:

Հայտերն ընդունվում են երկուշաբթիից-ուրբաթ ժամը 10:00-17:00-ն, ընդմիջում՝ 13:00-14:00-ն:

Սակարկողը կարող է գինն ավելացնել աճուրդային քայլի չափից ոչ պակաս գումարով:

Եթե մասնակիցը չի հաղթել, նախավճարը անմիջապես վերադարձվում է նրան, եթե հաղթել է՝ նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ:

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

Աճուրդն անցկացվում է բաց, որին մասնակցում են հանձնաժողովի անդամները, գրանցված անձիք և աճուրդի մասնակից չհամարվող անձիք (դիտորդի կարգավիճակով):

Աճուրդի մասնակից չհամարվող անձիք աճուրդին ներկա գտնվելու համար, յուրաքանչյուր լոտի համար առանձին ներկայացնում են սահմանված չափով (5000 ՀՀ դրամ) մուտքի վճարի անդորագիր և անձնագիր:

Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է:

Աճուրդն սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկ կամ ավել է:

Աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը, որից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման:

Գույքի օտարումն իրականացվում է դասական աճուրդով:

Լոտի ուսումնասիրման համար կարող եք դիմել Թալինի համայնքապետարան աշխատանքային օրերին 16:00-18:00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՂԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՂԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ARMENIAN SOVIET SOCIALIST REPUBLIC ARAGATSOTN REGION TALIN MUNICIPALITY

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ